



ՍՈՂՈՄՈՆ ԹԵՇԼԵՐՅԱՆԻ ՄԻ ՆԱՄԱԿԸ

Երիտասարդ թուրքերի իթթիհատական կուսակցության պարագաների թավակալի, Էնթակի, Զամալի և այլոց կողմից 1915 թվականի ապրիլի 24-ին կազմակերպվում են արևմտահայ ժողովրդի տեղահանությունները և մասսայական ջարդերը: Զարդերից մի կերպ փրկվում է Երզնկայի շրջանի Բագանի գյուղացի Սողոմոն Թեհիլերյանը (1896—1960 թթ.) և փախչում, միանում է թուրքերի դեմ կովող հայերի խմբին: Կովի ընթացքում նա սրբաքից վիրավորվում է: Կաղալով բարձրանում է լեռները և պատրաստարվում բարի քորդ մի ընտանիքի մոտ: Ապաքինվելուց հետո ծաստված անցնում է Պարսկաստան, միանում ուսուական բանակին, մտնում զորավար Անդրանիկի (1865—1927 թթ.) շնորհած, մասնակցում թուրքերի դեմ հրա վարած կոփերին, ապա ազատում բանակից և 1916 թվականին գնում Երևան, Եջմիածին և Թիֆլիս, և որ մի ժամանակ սովորում է Ներսիսյան դպրոցում (որից առարկաների հետ սովորում է նաև ոստիքեն լեզուն): Սողոմոն Թեհիլերյանն ապս մեկնում է Հյուսիսային Կովկաս, ծանոթանում տեղի սովորական իշխանության նեկավարների հետ: Այնուհետև անցնում է արտասահման և 1921 թվականի մարտի 15-ին (ինը տումարով) Բեղլինում սպանում հայ ժողովրդի դամբճ Թալիար փաշային, և որի համար էլ դատի են ենթարկում հրան: Բայց դատավարության ժամանակ արդարանում է նա, ապա անցնում Հարավալալիա, իսկ հետո՝ Ամերիկա և իր վերջին օրերը անցկացնում Սան-Ֆրանցիսկո քաղաքում:

1916 թվականի մունիսի 26-ին Սողոմոն Թեհիլերյանն Եջմիածին եղած ժամանակ մի

նամակով դիմում է Եջմիածինի միարանության անդամ, ականավոր հայագետ, Բետագայուս Կիլիկիայի Գարեգին Հովսեփյան կայողիկովին (1867—1952 թթ.), որով խնդրում է Եջմիածինի որբանոց ընդունել որք մի պատաստ:

Համաշխարհային առաջին պատերազմի ծանր տարիներին (1914—1917 թթ.), բացի բոգնոր և գիտական աշխատանքներից, Գարեգին վարդապետ Հովսեփյանը վարում է նաև Եջմիածինի հայկական նորարաց որբանոցի վարիչի պարտականությունը: Որբանոցում հավաքում, խնամում և դաստիարակում էին 1915 թվականին երիտասարդ թուրքերի կառավարության կողմից կոստրուածներից փրկված հայ, եղդի և ասորի երեխաների:

Սողոմոն Թեհիլերյան՝ Գարեգին վարդապետ Հովսեփյանին ուղարձ հիշյալ նամակից պարզվում է, որ Ս. Թեհիլերյանը 1916 թվականին որոշ ժամանակ աշխատել է «Բաղար միություն» կոչված Խնամու քաղաքի որբանոցի համար: Կոտրաձներից մի կերպ փրկված երեխաներին հավաքում էին հիշյալ որբանոցում և հրանց տեղափոխում Կովկաս: Երեխաներից փոքրերին պահում էին որբանոցում, իսկ մեծերին՝ ազատ արձակում իրենց ցանկացած տեղերում աշխատելու համար: Նամակից պարզվում է, որ Կովկաս են տեղափոխվել 500 երեխա, որուց թվում եղել է Մշո դաշտի թիլ գյուղացի որք մի տղա, որի բոլոր ազգականերին կոտրում են երիտասարդ թուրքերը, իսկ նա մի կերպ փախչում և փրկվություն է գտնում բարի քորդ մի ընտանիքում մինչև ուսուական մարդասեր և փրկարար բանակի մուտքի այդ վայրը: Ս. Թեհիլերյանը թա-

խանձագին խնդրում է Գարեգին Վարդապետ Հովսեփյանին, որ այդ տղային ընդունի որբանոց, որը ամաշկու և վտիս լինելու պատճառով որբանոցից դորո այժմ ապրել չի կարող: Հավանական է, որ Գարեգին վրոյ Հովսեփյանը հարգում է Ս. Թեհիերյանի խնդիրը և տղային ընդունում որբանոց:

Արժանապատիվ տեր Գարեգին հայր Վարդապետ

Սուորագրյաս Զերդ անարժան ծառան լինելով, կուգամ խոնարհաբար Զերդ սուրբ Աջը համբուրելով մի քանի խնդրել, որը Զեզ հայտնած եմ թերամացի, բայց ին ներկայացած պարագայիս երկար ժամանակ չունենալով Զեզ բացատրել խնդրի մասնաւուն պարագաները, ստիպված եմ սույն խնդրագիրը համակով հայտնել:

Աղեքսագին կերպով պիտի խնդրեի Զեզանից որ՝ այն Մշեցի¹ որբը որև որ այսօք Զեր գրաստեմակի մեջ ներկայացավ Զեզ, հրամայեիք որ ընդունելու տեղին որբանոցում: Նրա տարիքը 13 է, Մշո դաշտի Թիլ գյուղից² մի ազնիվ ընտանիքի զավակ է որուն բոլոր պարագաները³ կոտորվել և անցյալ տարի Մշո ընդհանուր կոտորածին, իսկ ինքը մնացել է մի բարյացակամ քրորդ ցեղապետի մոտ մինչև Մուշի գրավվելը:

Իրավ է, հաստատում եմ, որ դրանց նման երեխաներ իբր գաղթական նախատ ստամագով և աշխատելով կարող են մի կերպ ապրիլ, սակայն այս երեխան երբեք այդ արիություններ չունեն, այնքան փափկիս իրու ու ամաշկու է, որ Զեզ հավատացնում եմ եթե օրերով ալված լինի, ոչ մեկու չի համարձակիր հայտնել և մի պատառ հաց ուզել: Այսօք եթե Դուք ասացիք որ չեք կարող որբանոցում ընդունել, այդ բռակեց սկսեց արտավել և մինչև հինա չի դադարում. ուզեցի ինձ հետ տանել ճաշարան, բայց չուզեց գալ և արտավելով երանի է տալիս այն օրերին, որ ապրել է քյուրտերի մոտ և նախընտրում է ապրիլ անցյալ այդ մի տարիվան գերի կանքը և ոչ ներկայի կյանքը:

Գոյք իմ ասածները Զեզ համար ավելացրանաւորուններ լինեն. բայց ես պարտականություն եմ համարում մի երկրորդ անգամ և դիմում ընել Զերդ արժանապատ-

Սուորեն հրատարակում ենք Ս. Թեհիերյանի հիշյալ համակը: Կարծում ենք, այն օգտակար լինին Եշանավոր հայրենասերի լյանքը և գործունեությունը ուսումնասիրող ների համար:

ԱՎԵՏԻՔ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ԱԴԱՄՅԱՆ

Վության այս խնդրի մասին. որովհետո երախային լավ ծանոր եմ և խիդան տան շելու է զիս եթե աղբայիս մի մաքոր երախան ձգեմ այստեղ, և հենց դրա համար խնդրում և աղերտում եմ Զերդ արժանապատվությունից, որ նկատի առնենիք Զեր ծառապահ աղերսակը:

Ծառանիդի մի ժամանակ Քաղաք. միուրյան Խոնում որբանոցին հայիչ լինելով՝ բոլոր որբերին՝ որոնք փոխադրված են Կովկաս նոյն կոմիտեի միջոցով, ծանոր եմ և, որոնց թիվը հասնում է 500-ից ավելիի, բոլորին էլ տեսած ու ապրած եմ հետները և սրանով կարող եմ ստեղ, որ այսպիսի խնդր և համեստ երախաններ շատ հազվագյուտ են: Քաղաք. միության Խոնու-Մուշի լիազոր ա. Ռոբեռն Տեր Միհնապանը ուզում էր հիշյալ որբը իր մոտ պահել, բայց որովհետու երախան ուզում էր ուսանիլ, դրա պատճառով ա. Ռոբեռնը ուղարկեց Խոնումից որպեսզի երախային ուսմունքի բեղմնաւոր ժամանակները պարապը չվատնը վիճակ:

Ես ամենայն սիրով ինձ հետ տանելու էի մինչև Թիֆլիս, այնուո՞ւ մի որևէ որբանոցում տեղավորելու, բայց դժբախտաբար իմ դրամական պարագաներն չեն ներում, և ոչ մի տարբեր միջոց էլ չունիմ:

Զերդ սուրբ Աջը համբուրելով և աղերսելով կապաղատիմ ու կիուսամ որ չպիտի մերժեիք անարժան ծառանիդ:

Սպասելով Զերդ կարգադրության

Սոլոմոն Խ. Թեհիերյան

Էրգրումի նահանգի Երգնևկա գավառից:
26/6—1916 թ.
Վաղարշապատ

(Հայկ. ՍՍՀ Միհնատթերի սովետին առնեթեր Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ (Մատենադարան), Գարեգին կաթողիկոս Հովսեփյանի արխիվ,
թղթ. 95, վագ. 564)

¹ Բնագրում՝ Մուշիցի:

² Բնագրում՝ գիղից:

³ Ալիքներ՝ աղգականները: